

ԲՈՒՀԻ ՀԵՇԱԿԱ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ՔՆՍՈՒԹՅՈՒՆ

2024

ԿԵՆՍԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

ԹԵՍ 1

Խմբի համարը

Նստարանի համարը

Հարգելի՝ դիմորդ

Խորհուրդ ենք տալիս առաջադրանքները կատարել ըստ հերթականության: Ուշադիր կարդացե՛ք յուրաքանչյուր առաջադրանք և պատասխանների առաջարկվող տարբերակները: Եթե Զեզ չի հաջողվում որևէ առաջադրանքի անմիջապես պատասխանել, ժամանակը խնայելու նպատակով կարող եք այն բաց թողնել և դրան անդրադառնալ ավելի ուշ:

Ձեր առջև դրված թեստ-զրքույկի էջերի դատարկ մասերը ազատորեն կարող եք օգտագործել սևագրության համար: **Թեստ-զրքույկը չի ստուգվում: Ստուգվում է միայն պատասխանների ձևաթուղթը:**

Առաջադրանքները կատարելուց հետո չմոռանաք պատասխանները ուշադիր և խնայով նշել պատասխանների ձևաթղթում: Պատասխանների ձևաթղթի ճիշտ լրացումից է կախված Ձեր քննական միավորը:

Մադրում ենք հաջողություն:

1 Որո՞նք են նախակորիզավորներ.

- 1) սնկերը
- 2) վիրուսները
- 3) բակտերիաները
- 4) նախակենդանիները

2 Որտե՞ղ է զարգանում ծաղկավոր բույսի ձվարջիջը.

- 1) սաղմնապարկում
- 2) փոշեխողվակում
- 3) փոշեհատիկում
- 4) էնդոսպերմում

3 Որո՞նք են սպիտակ պլանարիայի արտաթորության օրգանները.

- 1) երիկամները
- 2) նախաերիկամները
- 3) աստղաձև բջիջները
- 4) մալպիզյան անորները

4 Ինչպե՞ս է ռուկրային ճկան ողնաշարը միացած գանգին.

- 1) կիսաշարժուն մեկ պարանոցային ողով
- 2) կիսաշարժուն երկու պարանոցային ողերով
- 3) շարժուն երկու պարանոցային ողերով
- 4) անշարժ

5 Ի՞նչ հաջորդական փուլերով է ընթանում միջատների լրիվ կերպարանափոխությունը.

- 1) հասուն միջատ, ձու, հարսնյակ, թրթոր
- 2) հասուն միջատ, թրթոր, ձու, հարսնյակ
- 3) ձու, թրթոր, հարսնյակ, հասուն միջատ
- 4) ձու, հարսնյակ, թրթոր, հասուն միջատ

6

Մարդու օրգանիզմում որտե՞ղ են գտնվում շարժողական նեյրոնների մարմինները.

- 1) ողնուղեղի գորշ նյութի հետևի եղջյուրներում
- 2) ողնուղեղային հանգույցներում
- 3) ողնուղեղի գորշ նյութի առջևի եղջյուրներում
- 4) ողնուղեղի սպիտակ նյութում և հետևի արմատիկում

7

Մարդու ո՞ր հորմոնի հավելյալ քանակն է առաջացնում հսկայություն.

- 1) թիրօքսինի
- 2) գլյուկագոնի
- 3) աղբենալինի
- 4) աճի հորմոնի

8

Մարդու զիստուղեղի մեծ կիսագնդերի կեղևի ո՞ր բլթում է գտնվում լսողական գոտին.

- 1) ծոծրակային
- 2) ճակատային
- 3) գագաթային
- 4) քունքային

9

Ինչերի՞ մասնակցությամբ է ֆիբրինոգենը վերածվում ֆիբրինի մարդու օրգանիզմում.

- 1) ցածր ջերմաստիճանի և կալիումի աղերի
- 2) կալցիումի աղերի և թրոմբին ֆերմենտի
- 3) կալիումի աղերի և պտիալին ֆերմենտի
- 4) թրոմբին և պեպսին ֆերմենտների

10

Որտե՞ղ է մարդու սրտում գտնվում երկփեղկ փականը.

- 1) առրտայի ներսում
- 2) վերին սիներակի մուտքի հարևանությամբ
- 3) աջ նախարտի և աջ փորոքի բացվածքի սահմանում
- 4) ձախ նախարտի և ձախ փորոքի բացվածքի սահմանում

11 Մարդու մաշկի ո՞ր շերտում են գտնվում քրտնագեղձերը.

- 1) բուն մաշկում
- 2) մելանին սինթեզող մահացած բջիջների շերտում
- 3) վերնամաշկում
- 4) ենթամաշկային բջջանքում և էպիդերմիսի մահացած բջիջների շերտում

12 Ինչո՞ւ ստամոքսի պատերը չեն մարսվում ստամոքսահյութի ազդեցության տակ.

- 1) ստամոքսահյութում բացակայում են սպիտակուցները ճեղքող ֆերմենտները
- 2) մարսողական ֆերմենտները չեն կարող մարսել տվյալ օրգանիզմում սինթեզված սպիտակուցները
- 3) ստամոքսի ներքին մակերևույթը պատված է լորձով
- 4) ստամոքսահյութն ունի հիմնային ռեակցիա, մինչդեռ սպիտակուցներ ճեղքող ֆերմենտներն ակտիվ են թթվային միջավայրում

13 Ո՞ր վիտամինը կարևոր նշանակություն ունի մարդու բնականոն աճի և մքնշաղին տեսողության ապահովման համար.

- 1) A
- 2) B₁
- 3) C
- 4) D

14 Մարդու ո՞ր մկանները միջաձիգ զոլավոր չեն.

- 1) դեմքի
- 2) կերակրափողի ստորին մասի
- 3) ստոծանու
- 4) լեզվի

15 Մարդու օրգանիզմում որտե՞ղ է ձևավորվում առաջնային մեզը.

- 1) պատիճի մազանոքներով հոսող արյան մեջ
- 2) երիկամի ավազանում
- 3) երիկամի կեղևային շերտում
- 4) մեզը հավաքող խողովակում

16 Ի՞նչ է բնորոշ պայմանական ռեֆլեքսներին.

- 1) անհատական են
- 2) բնորոշ են բոլոր մարդկանց
- 3) մշտական են
- 4) ժառանգվում են

17 Ո՞ր շարքում են թվարկված միայն միաշաքարներ.

- 1) գյուղող, ցելյուլոզ, ոիբոզ
- 2) ոիբոզ, դեզօքսինիբոզ, խիտինը
- 3) ֆրուկտոզ, ոիբոզ, գլիկոզենը
- 4) գալակտոզ, էրիթրոզ, քսիլոզ

18 Ո՞ր դեպքում է ճիշտ նշված ԴՆԹ-ի կազմում գտնվող նուկլեոտիդներից մեկի կազմությունը.

- 1) ցիտոզին - ոիբոզ - ֆոսֆորական թթվի մնացորդ
- 2) ուրացիլ - դեզօքսինիբոզ - ֆոսֆորական թթվի մնացորդ
- 3) գուանին - ոիբոզ - ֆոսֆորական թթվի մնացորդ
- 4) թիմին - դեզօքսինիբոզ - ֆոսֆորական թթվի մնացորդ

19 Հեղուկի կաթիլներում լուծված կամ կախյալ վիճակում գտնվող նյութերը պլազմային թաղանթի միջոցով բջիջ են քափանցում.

- 1) պինոցիտոզի միջոցով
- 2) ֆագոցիտոզի միջոցով
- 3) առանց արտաքին էներգիայի ծախսի
- 4) ոիֆուզիայի ճանապարհով

20 Ածխաջրերի սինթեզն իրականանում է՝

- 1) բջջային կենտրոնում
- 2) ոիբոստմներում
- 3) հարթ էնդոպլազմային ցանցում
- 4) հատիկավոր էնդոպլազմային ցանցում

21

Բջջի օրգանոփերից ո՞րն է անմիջականորեն կապված բջջային շնչառության հետ.

- 1) ոիրոսոմը
- 2) միտոքրոնոլոգիումը
- 3) բջջային կենտրոնը
- 4) լիզոսոմը

22

Ո՞ր գործընթացներն են տեղի ունենում ֆոտոսինթեզի լուսային փուլի ընթացքում.

- 1) մոլեկուլային թթվածնի, ատոմային ջրածնի և ածխաջրերի առաջացում
- 2) մոլեկուլային թթվածնի առաջացում, ԱԵՖ-ի և ածխաջրերի սինթեզ
- 3) ԱԵՖ-ի սինթեզ, մոլեկուլային թթվածնի և ատոմային ջրածնի առաջացում
- 4) ԱԵՖ-ի սինթեզ, ատոմային ջրածնի և ածխաջրերի առաջացում

23

Ի՞նչ պրոցեսներ են բնորոշ միտոզի քելոֆազին.

- 1) քրոմոսոմների դասավորում իլիկի հասարակածային հարթությունում
- 2) դուստր քրոմոսոմների հեռացում միմյանցից և տարամիտում դեպի բջջի բնեղներ
- 3) քրոմոտոնների ապապարուրում և միահյուսում իրար, կորիզաքաղանթի ձևավորում
- 4) քրոմոսոմների պարուրում և միահյուսում իրար, կորիզաքաղանթի տարրալուծում

24

Ո՞ր օրգանիզմներին է բնորոշ բողբոջման միջոցով բազմացումը.

- 1) տափակ որդերին
- 2) խմորասնկերին, սողուններին, բույսերին
- 3) ծովաստղերին, որոշ ջրիմուտներին, ինֆուզորիաներին
- 4) խմորասնկերին, հիդրաներին, հիդրոիդ և կորալյան պոլիպներին

25

Ի՞նչ ֆենոտիպային առանձնահատկություն է դրսերվում ոչ լիիվ դոմինանտության դեպքում.

- 1) հետերոզիգոտ առանձնյակները ֆենոտիպով չեն տարբերվում ըստ ռեցեսիվ գենի հոմոզիգոտ առանձնյակներից
- 2) հետերոզիգոտ առանձնյակները արտաքինից տարբերվում են ըստ դոմինանտ գենի հոմոզիգոտներից
- 3) հետերոզիգոտ առանձնյակները ֆենոտիպով չեն տարբերվում ըստ դոմինանտ գենի հոմոզիգոտ առանձնյակներից
- 4) ըստ ռեցեսիվ գենի հոմոզիգոտ առանձնյակները արտաքինից չեն տարբերվում ըստ դոմինանտ գենի հոմոզիգոտ առանձնյակներից

26

Ինչի՞ է հավասար կանաչ գույնի հարք սերմեր ունեցող ոլորի հնարավոր գենոտիպերի թիվը.

- 1) մեկի
- 2) երկուսի
- 3) երեքի
- 4) չորսի

27

Ինչպե՞ս է կոչվում օրգանիզմների հատկանիշները և զարգացման առանձնահատկությունները հաջորդ սերունդներին փոխանցելու հատկությունը.

- 1) գենոտիպ
- 2) ֆենոտիպ
- 3) ժառանգականություն
- 4) փոփոխականություն

28

Ինչո՞վ է պայմանավորված բույսերի ցիտոպլազմային արական ամլությունը.

- 1) փոշեհատիկի երկու սպերմիումներից մեկի ոչնչացմամբ
- 2) սաղմնապարկում ձվարջի բացակայությամբ
- 3) սաղմնապարկում կենտրոնական բջջի բացակայությամբ
- 4) փոշեհատիկի միտոքոնդրիումների ԴՆԹ-ի մուտացիաներով

29

Ի՞նչ է ընկած անեռուպոլիոիդայի հիմքում.

- 1) քրոմոսոմների թվաքանակի բազմապատիկ անգամ փոքրացումը
- 2) քրոմոսոմների թվաքանակի ոչ բազմապատիկ անգամ փոփոխումը
- 3) քրոմոսոմների թվաքանակի բազմապատիկ անգամ մեծացումը
- 4) քրոմոսոմների թվաքանակի պահպանումը

30

Զանի՞ ֆենոտիպային և գենոտիպային խմբեր են ստացվում երկու երկինտերողիզուտ առանձնյակների խաչասերման արդյունքում՝ գույզ ալելներով լրիվ դոմինանտության և գեների անկախ բաշխման դեպքում.

- 1) 4 ֆենոտիպային և 9 գենոտիպային ձևեր
- 2) 9 ֆենոտիպային և 4 գենոտիպային ձևեր
- 3) 4 ֆենոտիպային և 16 գենոտիպային ձևեր
- 4) 16 ֆենոտիպային և 4 գենոտիպային ձևեր

31

Փոփոխականության ո՞ր ձևն է պայմանավորում Կովկասում և Սիրիում ապրող սկզբունքների արտաքին տարրելությունները.

- 1) մուտացիոն և տարիքային
- 2) աշխարհագրական
- 3) տարիքային
- 4) ոչ աղապտիվ

32

Նշված էվոլյուցիոն փոփոխություններից ո՞րն է արոմոքող.

- 1) կենդանիների օրգանիզմում քորդայի առաջացումը
- 2) միջատների բերանային ապարատի ձևափոխությունները
- 3) մերձահատակյա կենսակերպ վարող ձևների մարմնի տափակությունը
- 4) բրդուրների հովանավորող գունավորման առաջացումը

33

Ո՞րն է կենսածին էկոլոգիական գործոն.

- 1) մթնոլորտային ճնշումը
- 2) մակարուծությունը
- 3) ուսդիուական ճառագայթումը
- 4) օրվա տևողությունը

34

Ավստրալիայում Եվրոպայից բերված մեղվատու մեղրուն դուրս է մղել խայթից գուրկ տեղական մեղվիմ։ Սա փոխարարելությունների ո՞ր ձևն է.

- 1) ներտեսակային գոյության կոիկ
- 2) միջտեսակային գոյության կոիկ
- 3) պայքար անօրգանական աշխարհի անբարենպաստ պայմանների դեմ
- 4) ներտեսակային մրցակցություն

35

Ո՞րն է էկոհամակարգերի երկրորդային արտադրանքը.

- 1) պրոդուցենտների կենսագանգվածի աճը միավոր ժամանակում
- 2) ռեդուցենտների և պրոդուցենտների կենսագանգվածի ավելացման արագությունը
- 3) կոնսումենտների կենսագանգվածի ավելացման արագությունը
- 4) էկոհամակարգը կազմող բոլոր կենդանի օրգանիզմների գումարային զանգվածը

36

Ո՞ր բակտերիաներն են օգտագործում ազոտային թթուն ազոտականի օրսիդացնելու ժամանակ անջատվող էներգիան.

- 1) ազոտ ֆիքսող
- 2) նիտրիֆիկացնող
- 3) ամոնիֆիկացնող
- 4) սիմբիոտիկ պալարաբակտերիաները

(37-38) Խաչասերել են աaBBCcDdEeFf x AABbCcDDEeFf գենոտիպերով առանձնյակներ։ Ալելային գեների առաջին երեք զույգերում առկա է ոչ լրիվ դրսինանտություն, իսկ վերջին երեքում՝ լրիվ։ Տվյալ հատկանիշները պայմանավորող գեները գտնվում են հոմոլոգ քրոմոսոմների տարրեր զույգերում։

37

Գտնել սերնդում հնարավոր գենոտիպերի թիվը.

- 1) 24
- 2) 48
- 3) 54
- 4) 108

38

Գտնել սերնդում հնարավոր ֆենոտիպերի թիվը.

- 1) 24
- 2) 48
- 3) 54
- 4) 108

(39-40) ԴՆԹ-ի մոլեկուլի հատվածը կազմված է 9240 նուկլեոտիդներից, իսկ $A+T / G+C$ քանակական հարաբերությունն այդ հատվածում հավասար է 1,2-ի:

39 Գտնել աղենինային նուկլեոտիդի քանակը ԴՆԹ-ի մոլեկուլի այդ հատվածում.

- 1) 2100
- 2) 2520
- 3) 5040
- 4) 1260

40 Գտնել ցիտոզինային նուկլեոտիդի քանակը ԴՆԹ-ի մոլեկուլի այդ հատվածում.

- 1) 1260
- 2) 1050
- 3) 2100
- 4) 2520

41 Ո՞ր առանձնահատկությունը (նշված է ձախ սյունակում) ո՞ր օրգանիզմներին (նշված է աջ մասում) է առավել բնորոշ: Նշել համապատասխանություններն ըստ հերթականության.

Առանձնահատկություն

Օրգանիզմներ

- A. Էկոհամակարգում ռեդուցենտների դեր են կատարում
- B. ունեն ավտոստրոֆ սննդառություն
- C. Էկոհամակարգում պրոդուցենտների դեր են կատարում
- D. ունեն հետերոստրոֆ սննդառություն
- E. արտազատում են միզանյոթ
- F. քաղմանում են սերմներով
- G. քջիջներում գլիկոզեն է կուտակվում

- 1. սնկեր
- 2. բույսեր

42 Մարդու արյան ո՞ր ձևավոր տարրին (նշված է աջ սյունակում) ո՞ր բնութագիրն է (նշված է ձախ սյունակում) համապատասխանում: Նշել համապատասխանություններն ըստ հերթականության.

Բնութագիր

Ձևավոր տարր

- | | |
|--|--------------|
| A. արյան ամենափոքր ձևավոր տարրն է | 1. թրոմբոցիտ |
| B. չունի կայուն ձև | 2. էրիթրոցիտ |
| C. կյանքի տևողությունը 120-130 օր է | 3. լեյկոցիտ |
| D. պարունակում է հեմոգլոբին | |
| E. ունի երկու կողմից ներհրված սկավառակի տեսք | |
| F. չափսերով ամենամեծն է | |
| G. ընդունակ է ֆազոցիտոզի | |

43 Մարդու ո՞ր ոսկորը (նշված է ձախ սյունակում) կմախքի ո՞ր բաժնի կազմի մեջ է (նշված է աջ սյունակում) մտնում: Նշել համապատասխանություններն ըստ հերթականության.

Կմախքի բաժին

Ոսկոր

- | | |
|---------------|--------------------------|
| A. թիակ | 1. ստորին վերջույթի գոտի |
| B. կոմքոսկը | 2. վերին ազատ վերջույթ |
| C. մեծ ոլոք | 3. իրան |
| D. ճաճանչոսկը | 4. վերին վերջույթի գոտի |
| E. կրծոսկը | 5. ստորին ազատ վերջույթ |
| F. անրակ | |
| G. բազկոսկը | |
| H. կող | |

44

Սաղմնային գարզացման ընթացքում ո՞ր օրգանը, հյուսվածքը (նշված է ձախ սյունակում) սաղմնային ո՞ր թերթիկից է (նշված է աջ սյունակում) առաջանում: Նշել համապատասխանություններն ըստ հերթականության.

Օրգան, հյուսվածք

Սաղմնային թերթիկ

- A. ատամների էմալ
- B. նյարդ
- C. աղիքի էպիթել
- D. ոսկոր
- E. երիկամ
- F. մաշկի էպիթել
- G. կմախքի կոճիկային տարրեր
- H. խոիկների էպիթել

1. Էկտոդերմ
2. Էնտոդերմ
3. մեզոդերմ

45

Չափանիշի ո՞ր բնութագիրը (նշված է ձախ սյունակում) տեսակի ո՞ր չափանիշին (նշված է աջ սյունակում) է համապատասխանում: Նշել համապատասխանություններն ըստ հերթականության.

Չափանիշի բնութագիր

Տեսակի չափանիշ

- A. տեսակը կարող է գոյատևել միջավայրի միայն որոշակի պայմաններում
- B. քրոմոսոմների բնորոշ հավաքակազմ
- C. առանձնյակների արտաքին և ներքին կառուցվածքների նմանություն
- D. տեսակը զբաղեցնում է խիստ որոշակի արեալ
- E. սպիտակուցների և նուկլեինաքրուների բնորոշ կառուցվածք և կազմ
- F. առանձնյակների բազմացման նմանություն

1. կենսաքիմիական
2. ձևաբանական
3. ֆիզիոլոգիական
4. գենետիկական
5. աշխարհագրական
6. էկոլոգիական

46

Ո՞րն է կաթնասունների ողնաշարի բաժինների ճիշտ հաջորդականությունը՝ սկսած պոչային բաժնից: Նշել ճիշտ հաջորդականությունը.

1. կրծքային
2. գոտկային
3. պոչային
4. պարանոցային
5. սրբանային

47

Ի՞նչ հաջորդականությամբ է արյունը շարժվում մարդու արյան շրջանառության մեջ շրջանի անորոշերում՝ ձախ փորոքի կծկումից հետո: Նշել ճիշտ հաջորդականությունը.

1. խոշոր երակներ
2. մազանոթներ
3. խոշոր զարկերակներ
4. մանր երակներ
5. սիներակներ
6. մանր զարկերակներ
7. առրտա

48

Ի՞նչ հաջորդականությամբ են տեղի ունենում գործընթացները մարդու օրգանիզմում ցուրտ պայմաններում: Նշել ճիշտ հաջորդականությունը.

1. մաշկի սառնության ընկալիչների դրդում
2. մաշկի արյունատար անորոշների նեղացում
3. ջերմատվության բուլացում
4. արտաքին միջավայրի ջերմաստիճանի նվազում
5. ջերմակարգավորման կենտրոնի դրդում
6. մաշկ մղվող արյան ծավալի նվազում

49

Ի՞նչ հաջորդականությամբ են տեղի ունենում պրոցեսները՝ բակտերիաֆագով բակտերիայի վարակման ժամանակ: Նշել ճիշտ հաջորդականությունը.

1. բջջաբաղանքի «զուծում»
2. նոր բակտերիաֆագերի ձևավորում
3. բակտերիաֆագի $\text{Դ}\text{-}\text{Ն}\text{մ}$ -ի սինթեզ
4. բակտերիայի ոչնչացում
5. բակտերիաֆագի $\text{Դ}\text{-}\text{Ն}\text{մ}$ -ի ներարկում բակտերիայի մեջ
6. պոչային ելունների ամրացում բջջաբաղանքին
7. բակտերիաֆագի սպիտակուցների սինթեզ

50

Ինչպիսի՞ն է պրոցեսների հաջորդականությունը բույսերի օրգանիզմում սպիտակուցի մոլեկուլի առաջացման ժամանակ:

1. սպիտակուցի տարածական կառուցվածքի առաջացում
2. ջրի և անօրգանական աղերի ներծծում արմատի միջոցով
3. ամինաթթուների միջև ջրածնային կապերի առաջացում
4. ամինաթթուների սինթեզ՝ անօրգանական նյութերից
5. ամինաթթուների միջև պեպտիդային կապերի առաջացում
6. հիդրոֆոր և -S-S- կովալենտ կապերի առաջացում

51

Ինչպիսի՞ն է աճման գոտի անցած բջջի հետ կատարվող վերափոխումների հաջորդականությունը զամետոգենեզի ընթացքում: Նշել ճիշտ հաջորդականությունը.

1. n2c հավաքակազմով բջիջների առաջացում
2. նուկլեոտիդների միջև կովալենտ կապերի խզում
3. հոմոլոգ քրոմոսոմների կոնյուգացիա
4. սպերմատիդների առաջացում
5. քրոմատիդների տարամիտում
6. $\text{Դ}\text{-}\text{Ն}\text{մ}$ -ի քանակի կրկնապատկում
7. քրոմոսոմների տարամիտում

52

Նշել բոլոր ճիշտ պնդումները.

1. գյուկողի՝ մինչև պիրոխաղողաթթվի ճեղքման արդյունքում անջատվում է 210 կԶ/մոլ էներգիա, որի մեծ մասը (60 %) պահեստավորվում է ԱԵՖ-ի ձևով, իսկ մյուս մասը (40 %) ցրվում է որպես ջերմային էներգիա
2. Էկտոպլազմային բնորոշ է սպիտակուցային թելիկների խրձերի և տուրուին սպիտակուցից կազմված միկրոխողովակների առկայությունը
3. բջջում օրգանական նյութերը՝ ածխաջրերը, լիպիդները, սպիտակուցները, նուկլեինաթթուները սինթեզվում են անարողիզմի արդյունքում
4. շրջակա միջավայրում կախումի իոնների պարունակությունն ավելին է, քան կենդանի բջիջներում, իսկ նատրիումի իոնների պարունակությունը կենդանի բջիջներում է ավելին, քան շրջակա միջավայրում
5. գենետիկական կողը վերածածկվող չէ, քանի որ բոլոր օրգանիզմներում նույն եռյակները պայմանավորում են նույն ամինաթթուն
6. պերօքսիստմներն առաջանում են Գոլջիի ապարատում

53

Ի՞նչն է բնորոշ մարդու լյարդին: Նշել բոլոր ճիշտ պնդումները.

1. մասնակցում է ածխաջրերի փոխանակությանը
2. դրունքով դուրս են գալիս լեղածորանը և դռներակը
3. սինթեզում է արյան մակարդմանը մասնակցող ֆիբրին և պրոթրոմբին սպիտակուցները
4. սպիտակուցների քայլայման արգասիքները վերափոխում է միզանյոթի
5. պարբերաբար արյան հուն է մղում հեպարին հակամակարդիչ նյութը
6. մարդու օրգանիզմի ամենախոշոր գեղձն է

54

Նշել բոլոր ճիշտ պնդումները.

1. տրամախաչումը հանգեցնում է ժառանգական փոփոխականության և բնական ընտրության արդյունավետության մեծացմանը
2. տրամախաչման ժամանակ քրոմոսոմները փոխանակվում են ամբողջական քրոմատիզմներով
3. հիբրիդների առաջին սերնդի միակերպության օրենքը Սենդելի առաջին օրենքն է
4. համաձայն ԹՇ.Սորգանի կատարած փորձերի՝ պտղաճանճի երկինտերոզիզոտ էզի և ռեցեսիվ հատկանիշներով արուի խաչասերման արդյունքում առաջին սերնդում ստացվում է չորս ֆենոտիպ՝ յուրաքանչյուրից 25 %
5. գերդոմինանտության դեպքում հոմոզիգոտ դոմինանտ գենոտիպի դեպքում դոմինանտ հատկանիշն ավելի ցայտուն է դրսևրվում, քան հետերոզիզոտ գենոտիպի դեպքում
6. դրոզոֆիլ պտղաճանճն օժտված է իգական հոմոզամետությամբ

55

Նշել բոլոր սխալ պնդումները.

1. բնական ընտրությունը էվոլյուցիայի շարժիչ ուժ է
2. մակրոէվոլյուցիան ավարտվում է նոր տեսակի առաջացմամբ
3. միմիկրիայի դեպքում քիչ պաշտպանված տեսակը մարմնի ձևով, գունավորմամբ ընդօրինակում է պաշտպանված տեսակի հատկանիշները
4. օվկիանոսի ջրերը, նավթը և հողը դասվում են հանքային նյութերի շարքին
5. չփոփոխվող գոյության պայմաններում բնական ընտրությունը և էվոլյուցիան դադարում են
6. կոմենսալիզմը միջտեսակային փոխհարաբերությունների ձև է, որի դեպքում փոխազդող տեսակներից մեկի համար այն շահավետ է, մյուսի համար՝ անտարբեր
7. ազրուկությամբ օժտված չեն ինքնակարգավորմամբ և կայունությամբ

56

Նշել մարդու օրգանիզմի վերաբերյալ բոլոր սխալ պնդումները.

1. լեզվի համազգաց ընկալիչներում առաջացած ազդակներն հաղորդվում են անմիջապես տեսաթումբ, որտեղից էլ մեծ կիսազնդերի կեղևի զագաթային բիլք
2. վեգետատիվ նյարդային համակարգի սիմպաթիկ բաժնի գրգռումն ակտիվացնում է լեղու արտադրությունը
3. ենթատեսաթմբում տեղադրված են կենտրոններ, որոնք վերահսկում են օրգանիզմի ներքին միջավայրի բաղադրությունը
4. արհեստական ակտիվ իմունիտետը ձևավորվում է բուժիչ շիճուկի ներարկման արդյունքում
5. հոտն ընկալվում է արտաշնչման պահին
6. սրտի աշխատանքն արագացնում են աղբենալինը և կալցիումի իոնները

57

Նշել բոլոր սխալ պնդումները.

1. որքան լայն է հատկանիշի ռեակցիայի նորման, այնքան մեծ են շրջակա միջավայրին հարմարվելու օրգանիզմի հնարավորությունները
2. ոլողովիլ պտղաճանձի աչքերի գունավորումը սերի հետ շրայակցված հատկանիշ է, որը պայմանավորող գենը գտնվում է Y քրոմոսոմում
3. Y քրոմոսոմը կոչվում է արական քրոմոսոմ
4. հիբրիդների առաջին սերնդում 1:1 հարաբերությունն ըստ ֆենոտիպի ստացվում է այն դեպքում, եթե ծնողական առանձնյակներից մեկը հոմոզիգոտ է՝ ըստ դոմինանտ ալելի, մյուսը՝ հոմոզիգոտ է ըստ ռեցեսիվ ալելի
5. միևնույն ծնողների երեխաների գենոտիպային և ֆենոտիպային բազմազանությունը հիմնականում համակցական փոփոխականության արդյունք է
6. սիմետրիկ տրանսլոկացիայի դեպքում մի քրոմոսոմի ցենտրոմեր պարունակող հատվածը միանում է մյուս քրոմոսոմի ցենտրոմեր չպարունակող հատվածի հետ

58

Նշել բոչուններին վերաբերող բոլոր սխալ պնդումները.

1. սիրտը եռախորշ է
2. տաքարյունության շնորհիվ հարմարվել են տարբեր էկոլոգիական պայմաններում ապրելուն
3. ողնաշարը կազմված է չորս բաժիններից
4. կողերը կրծոսկրին միացած են անշարժ
5. ենթանրակային մկանները մասնակցում են թևերի բարձրացմանը
6. ուղիղ աղին բացվում է կոյանոցի մեջ
7. ունեն երրորդ կոաչ

(59-60) 1 մոլ գազը զբաղեցնում է 22,4 լիտր ծավալ: 50 m^2 տերևային մակերևույթ ունեցող ծառը 30 օրվա ընթացքում 16-ժամյա լուսային օրվա պայմաններում՝

59 Զանի՞ լիտր քրվածին է արտադրել այդ ընթացքում:

60 Զանի՞ լիտր CO_2 է կլանել այդ ընթացքում:

- (61-62) Զերմաճառագայթմամբ մաշկի միջոցով հեռանում է զերմության մինչև 60%-ը, զերմահաղորդմամբ՝ 15%-ը, իսկ գոլորշիացմամբ՝ զերմության 20%-ը: Օրվա ընթացքում զերմահաղորդմամբ մարմնից հեռացել է 735 կՎ էներգիա:

61

Քանի՞ կՎ էներգիա է հեռացել օրգանիզմից զերմաճառագայթմամբ:

62

Քանի՞ գրամ քրտինք է գոլորշիացել օրգանիզմից, եթե 1 գրամ քրտինքի գոլորշիացման համար ծախսվում է 2,45 կՎ էներգիա:

(63-64) Փոքր լճակում ձկան քանակը որոշելու համար բռնվել է 1800 ձուկ, նշվել և նորից քաց բռնվել լիճ: Որոշ ժամանակ անց բռնվել է 4500 ձուկ, որն ուղղից 1,2%-ը նշված էին:

63 Քանի՞ հազար առանձնյակ են միավորված տվյալ պոպուլյացիայում:

64 Որոշել տվյալ պոպուլյացիայի խտությունը (առանձ/ մ^3 -ով), եթե լճի ծավալը 500 մ^3 է:

- (65-66) Օրգանիզմում գլյուկոզի ճեղքման պրոցեսում առաջացավ 18 մոլ CO₂ և 126 մոլ ԱԵՖ: ԱԿՖ-ից ԱԵՖ-ի սինթեզի համար անհրաժեշտ է 30 կԶոռուլ/մոլ էներգիա:

65

Քանի՞ կԶոռու օգտակար էներգիա է կուտակվել անբթվածին փուլում:

66

Քանի՞ մոլ ջուր է անջատվել այդ ընթացքում:

(67-68) Մարդու օրվա ընթացքում հարաբերական հանգստի վիճակում՝ 10 ժ արթուն և 6 ժ քնած է: Աշխատանք կատարելիս շնչառությունն արագացել է 1,5 անգամ, յուրացվող թթվածնի ծավալն աճել է 25%-ով: Ընդունել, որ հարաբերական հանգստի վիճակում մարդը 1 րոպեում արթուն ժամանակ կատարում է 18 շնչառական շարժում:

67

Զանի^o լիտր թթվածին է յուրացվել օրգանիզմում արթուն ժամանակ:

68

Զանի^o լիտր թթվածին է արտաշնչվել մարդու օրգանիզմից հարաբերական հանգստի վիճակում: Պատասխանը բազմապատկել 10-ով:

69

Տրված 6 պնդումներից յուրաքանչյուրի համար ընտրել «ճիշտ է», «Սխալ է», «Զգիտեմ» պատասխաններից մեկը.

1. բջջակորիզը բջջի ամենամեծ օրգանիզմն է. այն առկա է բույսերի, կենդանիների, սնկերի, բակտերիաների բջջներում
2. կաթնասունների հասուն էրիթրոցիտներում կորիզ չկա, այդ պատճառով նրանք պրոկարիոտ բջջներ են համարվում
3. կորիզակյութը իր քիմիական կազմով չի տարբերվում ցիտոպլազմայի բաղադրությունից
4. քրոմատինը ԴՆԹ-ի, հիստոնային և ոչ հիստոնային սպիտակուցների բարդ համալիր է
5. կորիզաքաղաղանքը և կորիզակները տեսանելի են չքածանվող բջջներում
6. կորիզակներում ձևավորվում են ոիլոսոմների ենթամասնիկները

70

Մարդու օրգանիզմի կառուցվածքին կամ այնտեղ իրականացվող գործընթացներին վերաբերող տրված 6 պնդումներից յուրաքանչյուրի համար ընտրել «ճիշտ է», «Սխալ է», «Զգիտեմ» պատասխաններից մեկը.

1. բոքն արտաքինից պատված է բոքամզով, աջ բոքը մեծ է և կազմված է երկու բլթերից
2. բոքամիզը կազմված է երկու թաղանթներից՝ բոքային բոքամզային թաղանթ և մերձպատային (առպատային) բոքամզային թաղանթ
3. մերձպատային (առպատային) բոքամզային թաղանթը պատում է բոքերը ներսից և կազմված է էպիթելիային հյուսվածքից
4. գագերի դիֆուզիան ընթանում է ըստ խտությունների տարբերության՝ ցածր խտության տեղամասից բարձր խտության տեղամաս
5. ածխաթրու գազի հետ փոխազդելով՝ հեմոգլոբինն առաջացնում է կարբոհեմոգլոբին
6. մեծ կիսազնդերի կեղևում տեղակայված բարձրագույն շնչառական կենտրոնները կարգավորում են շնչառության հաճախականությունը խոսելու ընթացքում